

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման հարցերով փորձագետ՝ Արմինե Երզենյանի կողմից 2023թ-ի դեկտեմբերի 15-ից մինչև 2024թ-ի մարտի 15-ը կատարված աշխատանքների վերաբերյալ

1. Իրականացված աշխատանքների ընդհանուր նկարագիր

Փորձագետի կողմից իրականացվել է աշխատանքային ծրագրով նախատեսված ինը կետերից ութ կետերի մասով ամենօրյա ռեժիմով աշխատանքներ, իսկ մյուս կետերի մասով հիմնականում կատարվել է տվյալների ուսումնասիրում և հավաքագրում: Մասնավորապես.

1) Իրականացվել է բյուջետային գործընթացի շրջանակներում, տվյալների հավաքագրման, մշակման, ամփոփման, հաշվապահական հաշվառման վարման և հաշվետվությունների ներկայացման աշխատանքներ (1 տարվա բյուջետային հաշվետվություն՝ LS Finance, ՀԾ ծրագրերով, օրդերների մուտքագրում, պահեստի վարում, այդ թվում քաղաքացիական ավիացիայի կոմիտեի տարեկան ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունն ապահովելու նպատակով, անցկացվել է գույքի և ֆինանսական պարտավորությունների գույքագրում, գույքագրման արդյունքների մուտքագրում:

2) Իրականացվել է ֆինանսական հաշվետվությունների նախագծերի մշակման, ֆինանսական ռեսուրսների գնահատման, Կոմիտեին վերապահված մասով նախատեսվող և գանձվող պետական տուրքերի տարեկան տվյալների հավաքագրման աշխատանքներ և ներկայացվել է հաշվետվություններ համապատասխան պետական մարմիններ:

3) Իրականացվել է նոր վարձատրության համակարգի անցմամբ պայմանավորված, Կոմիտեի աշխատողների աշխատավարձին հավասարեցված վճարների (ստաժի հավելավճարների), վերապատրաստումների և արտասահմանյան գործուղումների հաշվարկ և հաշվետվություններ է ներկայացվել համապատասխան պետական մարմիններ:

4) Իրականացվել է տարեկան վիճակագրական հաշվետվությունների (1-Ա, 1-ԹԱԾ, 1-տրանսպորտ) կազմման աշխատանքներ և ներկայացվել է համապատասխան պետական մարմիններ:

5) Իրականացվել է «Արմենիան Հելիքոփթերս» ՍՊԸ-ի օդանավ շահագործողի վկայականի երկարաձգման շրջանակներում ներկայացվող հայտին կից

Ֆինանսական փաստաթղթերի ուսումնասիրություն և ներկայացվել առաջարկություն:

6) Իրականացվել է «Հայկական Ավիաուղիներ» ՍՊԸ-ի կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագրում փոփոխություն կատարելու նպատակով ներկայացվող հայտին կից ֆինանսական փաստաթղթերի ուսումնասիրություն և ներկայացվել առաջարկություն:

7) ECAC-ի կողմից էկոլոգիական ավիացիոն վառելիքի (CAC) քաղաքականության կիրառման վերաբերյալ հարցաշարի լրացման և ներկայացման աշխատանքներին մասնակցություն:

8) Ուսումնասիրվել և վերլուծվել է «Ֆլայ Արնա-Հայկական ազգային ավիաուղիներ» ՓԲԸ-ի կողմից հաստատման ներկայացված ԻԿԱՕ-ի Միջազգային ավիացիայում ածխաթթու գազի արտանետումների նվազեցման և փոխարինման համակարգի (CORSA) շրջանակներում՝ Մոնիթորինգի Պլանը:

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման հարցերով փորձագետ՝



Արմինե Երզենյան

Արմինե Երզենյանի կողմից կատարված աշխատանքները գնահատում եմ՝



(բավարար, լավ կամ գերազանց)

Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ՝



Միհրան Խաչատրյան

15.03.2024թ.